01/10.1/5068-08

2008-12-29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Արմեն Աշոտյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վիկտոր Դալլաքյանի, Հեղինե Բիշարյանի և Լիլիթ Գալստյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

<u>«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</u>

1. 2-րդ հոդվածի՝

1) առաջին մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածի դրույթներին, որով ամրագրված է ոչ թե քաղաքացիների, այլ յուրաքանչյուրի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը։

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի ամբողջ տեքստին.

2) 2-րդ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.1-ին հոդվածի պահանջներին։

2. 3-րդ հոդվածում՝

1) «միջազգային իրավական ակտերից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից» բառերով՝ նկատի ունենալով «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները.

2) «և իրավական ակտերից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «և իրավական այլ ակտերից» բառերով, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները ևս իրավական ակտեր են։

3. 3-րդ հոդվածով, նոր խմբագրությամբ, առաջարկվող 2-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել՝

1) և համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-ին հոդվածի պահանջներին՝ «դավանանք» բառը փոխարինելով «կրոն» բառով։ Նույն փոփոխությունն անհրաժեշտ է կատարել գործող օրենքի ամբողջ տեքստում.

2) նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «ուղղակի կամ անուղղակի սահմանափակումներ» և «կրոնական հողի վրա հետապնդումներ» հասկացություններ նախատեսված չեն.

3) նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով.

4) նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որոնցով հստակ սահմանված են կրոնական ազատության իրավունքը սահմանափակելու դեպքերը։

Բացի դրանից՝

1) պարզ չէ, թե ինչ «այլ իրավունքների խոչընդոտման» մասին է խոսքը, քանի որ այստեղ խոսքը գնում է միայն «կրոնի ազատության» իրավունքի մասին.

2) հարկ ենք համարում նշել, որ կրոնական հողի վրա հետապնդումների համար օրենքով պատասխանատվության կարգ նախատեսված չէ։

4. 6-րդ հոդվածով ներկայացված փոփոխությունն ընդունելի է, սակայն այդ դեպքում նպատակահարմար է օրենքում սահմանել նաև «կրոնական խումբ» հասկացությունը։

5. 7-րդ հոդվածն առաջարկում ենք հանել, քանի որ դավանանքին առնչվող հարաբերությունները չեն կարող պետության կողմից կարգավորվել։

6. 9-րդ հոդվածն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով, որ կրոնական քարոզչությամբ պետք է զբաղվեն դրա իրավասություն ունեցող կրոնական, այլ ոչ թե քարոզել ցանկացող բոլոր քաղաքացիները, որոնք հասարակական վայրերում կամ բնակարաններում մարդկանց փորձում են պարտադրել իրենց կրոնը կամ համոզմունքները։ Ուստի առաջարկում ենք «հոգեորսություն» հասկացության մեջ ներառել նաև քաղաքացիների կողմից քարոզչությունը, ինչպես նաև քարոզչության նպատակով քաղաքացիներին հետապնդելը, այդ թվում՝ բնակարաններում, աշխատավայրերի, հանգստի կամ այլ վայրեր գնալու, ինչպես նաև հեռախոսով քարոզչության իրականացումը, եթե այն չի իրականացվում քաղաքացու խնդրանքով։

7. 11-րդ հոդվածում՝

1) հստակեցման կարիք ունի «կրոնական խորհրդաբանություն» հասկացությունը.

2) նախատեսված սահմանափակումներն անընդունելի են, քանի որ նշված պատկերները և անվանումները նախ և առաջ «Ապրանքների և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետք է գրանցված լինեն և միայն այս դեպքում ապրանքային նշանի սեփականատերը կարող է արգելել հիշյալ պատկերների և անվանումների օգտագործումը գովազդում։ Սակայն այս դեպքում էլ պարզ չէ, թե ինչպես է կարգավորվելու և սահմանափակվելու այլ կրոններին առնչվող պատկերները կամ անունները գովազդում օգտագործելու հարցը։ Բացի դրանից, պարզ չեն նախատեսված սահմանափակումների իրավական հետևանքները, քանի որ օրենքով նման պատասխանատվության կարգ նախատեսված չէ.

3) պարզ չէ, թե ինչպես և ում կողմից է որոշվելու գովազդում օգտագործվող անունը սրբի անուն է, թե ոչ։ Բացի դրանից, հայտնի է, որ սրբերի բազմաթիվ պատկերներ կան գեղանկարչության մեջ ու կերպարվեստում և դրանք ոչ թե կրոնական, այլ հեղինակային իրավունքի օբյեկտներ են, որոնց հետ կապված հարաբերությունները կարգավորված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով։

8. 15-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ կրոնական կազմակերպությունների գործունեության և քարոզչության ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված դեպքում և կարգով, այլ ոչ թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Բացի դրանից, հոդվածը չի բխում «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից:

9. 16-րդ հոդվածում հստակեցման կարիք ունի «կոշտ վերահսկողություն» հասկացությունը: Միաժամանակ պարզ չէ, թե ում կողմից, ինչ կարգով և ինչ չափանիշներից ելնելով է որոշվելու վերահսկողության իրականացման հանգամանքը:

10. 18-րդ հոդվածը հիմնավորման կարիք ունի:

11. 20-րդ հոդվածում անհրաժեշտ է նախատեսել սահմանված ժամկետում չվերագրանցված կրոնական կազմակերպությունների վերաբերյալ դրույթ:

<u>«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</u>

1. 1-ին հոդվածն անհրաժեշտ է խմբագրել, նկատի ունենալով, որ՝

1) նոր խմբագրությամբ ներկայացված 162-րդ հոդվածի վերնագիրը և տեքստի բովանդակությունն իրար չեն համապատասխանում, քանի որ վերնագրում խոսքը գնում է նաև «աշխատանքներին աջակցելու» մասին, մինչդեռ հոդվածի տեքստը դրա մասին ոչինչ չի նախատեսում.

2) 2-րդ մասով նախատեսված հոգեորսությամբ զբաղվելու համար պետք է նախատեսել ավելի խիստ պատիժ.

3) Հայաստանի Հանրապետության ուղղիչ աշխատանքային օրենսգիրքն ուժը կորցրել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ի N ՀՕ-60-Ն օրենքով: Միաժամանակ 2006 թվականի հունիսի 1-ի N ՀՕ-119-Ն օրենքով ուժը կորցրել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածը:

Իրավական տեխնիկայի առումով «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն իրավական ակտում փոփո-

խություններ կամ լրացումներ նախատեսող ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում տրվում է իրավական ակտի լրիվ անվանումը, իսկ նույն օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են՝ օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարեթիվ, ամիսը (տառերով), ամսաթիվը (այսուհետ՝ ընդունման օրը), թիվը և «օրենք» բառը։

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին։

2. 2-րդ հոդվածում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները։

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 3-րդ, 4-րդ և 9-րդ, 16-րդ հոդվածներին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածին,

3. 3-րդ հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները։

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածներին,

4. 3-րդ հոդվածում «1^1» թիվն անհրաժեշտ է փոխարինել «1.1» թվով։

5. Նախագծում առկա է երկու 3-րդ հոդված։

6. 5-րդ հոդվածում «հանել» բառն անհրաժեշտ է փոխարինել «ուժը կորցրած ճանաչել» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները։

7. 7-րդ հոդվածն անհրաժեշտ է միացնել 6-րդ հոդվածին, 12-րդը՝ 13-րդին, 17-րդը՝ 18-րդին։

Ելնելով շարադրվածից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի, ինչպես նաև գործող օրենքի առանձին դրույթներ չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և այլ օրենքների պահանջներին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը առա-

ջարկում է գործող օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ կամ օրենքը շարադրել նոր խմբագրությամբ։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամ է հեղինակների հետ համագործակցելու նախագծերի մշակման աշխատանքներում։

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-380-21.11.2008-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. ՈՒԺը կորցրած ճանաչել «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախաբանը։

Հոդված 2. Նույն օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է քաղաքացիների խղճի եւ կրոնի ազատության իրավունքը։ Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների եւ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը։

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին որպես ազգային եկեղեցի»։

***Հոդված** 3*. Ավելացնել նոր 1[1] հոդված՝

«Հոդված 1[1] . Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, միջազգային իրավական ակտերից, սույն օրենքից, այլ օրենքներից եւ իրավական ակտերից»։

***Հոդված** 3*. Նույն օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելիությունից, հավասար են օրենքի առջեւ։

Դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, ինչպես նաեւ կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն»։

***Հոդված** 4*. Նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ նասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Խղճի եւ կրոնի ազատության իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով« եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության« բարոյականության կամ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար։ »։

***Հոդված** 5*. Հանել նույն օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ մասը։

***Հոդված** 6*. Նույն օրենքի 5-րդ հոդվածի «ե» կետում «200» թիվը փոխարինել «1000» թվով։

***Հոդված** 7*. Նույն օրենքի 5-րդ հոդվածում ավելացնել նոր զ) կետ՝

«զ) քրիստոնեական դավանանքի դեպքում՝ դավանում են Հիսուս Քրիստոսին որպես Աստված եւ Փրկիչ եւ ընդունում են Սուրբ Երրորդությունը»։

***Հոդված** 8*. Նույն օրենքի 6-րդ հոդվածում «առաքելական» բառից հետո ավելացնել «սուրբ» բառը։

***Հոդված** 9*. Նույն օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 8. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է հոգեորսությունը՝ այլ կրոնական հայացքներ ունեցող քաղաքացիների նկատմամբ այնպիսի քարոզչական ներգործությունը, որը ուղեկցվում է նյութական խրախուսմամբ, ֆիզիկական ճնշմամբ, սպառնալիքով եւ հարկադրմամբ, մյուս կրոնական կազմակերպությունների, նրանց

դավանանքի եւ գործունեության հանդեպ, վիրավորանքների կիրառմամբ եւ թերահավատության սերմանմամբ»։

***Հոդված** 10.* Նույն օրեքնի 10-րդ հոդվածում «առաքելական» բառից հետո ավելացնել «սուրբ» բառը։

***Հոդված** 11.* Նույն օրեքնի 11-րդ հոդվածում ավելացնել նոր երկրորդ մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«Արգելվում է կրոնական խորհրդաբանության, կրոնական շինությունների պատկերների եւ անվանումների, սրբերի անունների եւ պատկերների օգտագործումը գովազդում, բացառությամբ սոցիալական գովազդի, առանց սեփականիտիրոջ համաձայնության։ Այս հարաբերությունները կարող են կարգավորվել պայմանագրային հիմունքներով։»

***Հոդված** 12.* Նույն օրենքի 14-րդ հոդվածից հանել «համայնքը կամ» բառերը։

***Հոդված** 13.* Նույն օրենքի 14-րդ հոդվածում «ե» տառը փոխարինել «զ» տառով։

***Հոդված** 14.* Նույն օրենքի 17-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերում «առաքելական» բառից հետո ավելացնել «սուրբ» բառը։

***Հոդված** 15.* Նույն օրենքի 18-րդ հոդվածում «Պետությունը» բառից հետո ավելացնել հետեւյալ բառերը՝

«, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, »։

***Հոդված** 16.* Նույն օրենքի 19-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է այն կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնք իրենց գործունեության ընթացքում իրականացնում են կամ փորձում են իրականացնել անդամների անձնական կյանքի, տեղեկացվածության, առողջության, սեփականության եւ վարքի կոշտ վերահսկողություն»։

***Հոդված** 17.* Նույն օրենքի 23-րդ հոդվածի ա) կետում «գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները» բառերը փոխարինել «սույն օրենքի հոդված 14-ի համապատասխան տալիս է փորձագիտական եզրակացություն» բառերով։

***Հոդված** 18.* Ուժը կորցրած ճանաչել նույն օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ մասը։

***Հոդված** 19.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո։

***Հոդված** 20.* Կրոնական կազմակերպությունները պարտավոր են վերագրանցվել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում։

Նախագիծ
Պ-380[1]-21.11.2008-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 162. Անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելը, ղեկավարելը կամ նրանց աշխատանքներին աջակցելը, հոգեորսությամբ զբաղվելը

1. Այնպիսի կրոնական կամ հասարակական միավորում կազմելը կամ ղեկավարելը, որի գործունեությունը զուգորդված է անձանց առողջությանը վնաս պատճառելով կամ անձանց այլ իրավունքների դեմ ոտնձգություններով, ինչպես նաեւ անձանց իրենց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելով՝ պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Հոգեորսությամբ զբաղվելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից չորս ամիս հետո։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների ընդունման վերաբերյալ

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ընդունվել է 1991 թվականին Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից։ Թեպետ երկու անգամ (1997 եւ 2001) ՀՀ Ազգային Ժողովի կողմից այն ենթարկվել է փոփոխությունների եւ լրացումների, գործող օրենքում պահպանվել են թե բովանդակային, թե խմբագրական թերություններ։

Խմբագրական շտկումների անհրաժեշտությունը ծագել է օրենքի ընդունման պահից առ այսօր Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության, նախեւառաջ՝ ՀՀ Սահմանադրության ընդունման հետեւանքով։

Բովանդակային փոփոխությունների կարեւորությունը առավել է ընդգծվում գործող օրենքում տեղ գտած մի շարք բացթողումների պատճառով: Ի մասնավորի, հստակեցված չէ «հոգեորսություն» հասկացությունը, վերանայման ենթակա է կրոնական կազմակերպության անդամների նվազագույն քանակական շեմը, մատնանշված չեն կրոնական կազմակերպությունների քայքայիչ եւ ամբողջատիրական գործունեության բնութագրիչները եւ այլն: Նշված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկները հիմնված են միջազգային իրավունքի եւ փորձի վրա:

Առաջարկվող ասյ փոփոխություններին ու լրացումներին զուգահեռ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է սահմանել քրեական պատիժ անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելու, ղեկավարելու կամ նրանց աշխատանքներին աջակցելու եւ հոգեորսությամբ զբաղվելու համար

Այն կարծիքին ենք, որ ներկայացված նախագծերը հարմար հիմք եւ առիթ կարող են հանդիսանալ Ազգային Ժողովում հոգեւոր-կրոնական ոլորտի օրենսդրության վաղուց հասունացած արդիականացման եւ բարեփոխման համար, այդ թվում՝ ազգային անվտանգության դիտանկյունից: